ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Օնւս, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե- 2816

«07» ապրիլի 2022թ.

ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ե. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
ԳՈՒՐԳԵՆ ՔԱՐՏԱԼՅԱՆ ԱՁ-ԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ

-ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) բացակայում է մասնակցի բանկային հաշվեհամարը, առաջին նախադասության մեջ ավելորդ են լրացված «ՀՀ Կոտայքի մարզ» բառերը, միաժամանակ փաստաթղթի վրա տեսանելի է էլեկտրոնային թվային ստորագրություն, սակայն հնարավոր չէ դիտել էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը,

-ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված N 1.2) «4.2. Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնի «4.2.2. Փաստաթղթի համարը» դաշտում լրացված թվանշանների քանակը գերազանցում է ՀՀ Կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ անձնագրերի համարակալման համար նախատեսված թվանշանների քանակին, միաժամանակ փաստաթղթի «1.3. Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնի «1.3.3. Հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը» դաշտում տեսանելի է էլեկտրոնային թվային ստորագրություն, սակայն հնարավոր չէ դիտել էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ

-ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) հաստատված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հնարավոր չէ դիտել էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը,

-ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) հաստատված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հնարավոր չէ դիտել էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

Գուրգեն Քարտալյան ԱՁ

-ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական, ինչպես նաև ռուսերեն լեզվով մասնակցի անվանումը լրացված չէ (լրացված է մասնակցի հայերեն անվանումը):

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **ապրիլի 08-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն, ինչպես նաև Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Ձեր տվյալները՝ համապատասխան հիմքերով, կուղարկվեն լիազորված մարմին՝ Ձեզ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԽԱՉԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Կայք՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788